

## Ձ.Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

### ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Անդրադարձ է կատարվում անգլերենի գիտական գրավոր խոսքին հատուկ այնպիսի բովանդակային հատկանիշներին, ինչպիսիք են նյութի հաջորդական և կապակցված շարադրանքը, վերացարկվածությունը, ճշգրտությունը, օբյեկտիվությունը և հակիրճությունը:

**Առանցքային բառեր.** ակադեմիական գրավոր խոսք, վերացարկվածություն, կապակցվածություն, օբյեկտիվություն, սեղմություն:

**Ներածություն.** Լեզվի գործառական տարբերակներից մեկը՝ գիտական ոճը, որ կիրառվում է գիտահետազոտական աշխատանքի բնագավառում, բավականին լայն հասկացություն է: Այդպիսի ընդգրկունությունը պետք է որ ենթադրի ժանրային մի ամբողջ շարք՝ համապատասխան բովանդակային և գործառութային առանձնահատկություններով: Ակնհայտ է, որ ժանրային այդպիսի բազմազանությունը ենթադրում է գիտական ոճի ենթաբաժանումներ: Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել գիտական ոճի տարաբնույթ բաժանումների: Հայ իրականության մեջ պրոֆեսորներ Զահուկյանն ու Խլղաթյանն ընդունում են հետևյալ տարաբաժանումը՝ *բուն գիտական* կամ *ակադեմիական*, *գիտատուսումնական* և *գիտահանրամատչելի* [1]: Այս տարաբաժանումը առավել համապարփակ և ամբողջական է ներկայացնում գիտական ոճի ենթատեսակները: Աշխատանքի նպատակադրումից ելնելով՝ չենք անդրադառնա գիտատուսումնական և գիտահանրամատչելի ենթատեսակների բովանդակային առանձնահատկություններին: Սակայն պետք է նկատենք, որ ակադեմիական, գիտատուսումնական և գիտահանրամատչելի ենթատեսակները տարբերվում են միմյանցից և՛ նյութով, և՛ լեզվաոճական առանձնահատկություններով: Այդուհանդերձ, այս երեք ենթաոճերին ներկայացվում են որոշակի նույնական պահանջներ. Դրանք են՝ շարադրանքի տրամաբանվածություն, կապակցվածություն, վերացարկվածություն, ճշգրտություն, ինչպես նաև լեզվի մաքրություն ու ճշգրտություն [2,3]:

1. Կապակցվածությունը՝ նախադասությունների և տեքստի հատվածների միջև կապակցող միավորների գործածությունն է: Անգլերենում առկա են նախա-

դասությունների և տեքստի հատվածների միջև կապակցող միջոցների մի քանի տեսակներ.

▪ Հղում (reference, ссылка): Հղման դեպքում գործածվում են հետևյալ բառային միավորները՝ it, he, him, this, that, here, there, որոնք կա՛մ փոխարինում, կա՛մ մատնանշում են այլ բառեր և/կամ տեքստի հատվածներ: Օրինակ՝ **Leonardo da Vinci** was a fifteenth-century Italian genius who produced only a handful of **finished works**. However, **they** include **the Mona Lisa** and the Last Supper, **the former** perhaps the most famous painting in the world. Although **he** is remembered mainly as an artist, **he** also was an innovative engineer, scientist and anatomist[4]: Նախաբերության և հետաբերության միջոցով իրականացվող կապակցվածությունը ևս ընդունելի է անգլերենի ակադեմիական գրավոր խոսքում: Նախաբերության դեպքում հղում է կատարվում տեքստում նախապես ասվածին (the former, the above-mentioned, prior to), իսկ հետաբերության դեպքում՝ հետագա ասելիքին (the latter, next, then, afterwards): Այստեղ կարևոր է նկատել նաև, որ ուսումնառության սկզբնական տարիներին սովորողները շատ հաճախ գիտական շարադրանքի կապակցվածությունը շփոթում են տեքստի ամբողջականության ու համակարգվածության հետ (coherence, когерентность): Սա խոսքը կազմող միավորների իմաստային կապն է, երբ շարադրանքը կազմված է տրամաբանորեն միմյանց հետ կապված իմաստային հատվածներից, որոնք ցույց են տալիս մտքի ընթացքը: Նախադասություններն առանձին-առանձին կարող են լինել կապակցված, այսինքն՝ օգտագործված լինեն շարահյուսական կապի միջոցներ, բայց եթե ապահովված չէ ասելիքի համակարգվածությունը, մտքերի՝ մեկը մյուսով պայմանավորված տրամաբանական հաջորդականությունը, ապա նախադասությունների, շարքը կդառնա անիմաստ, այսինքն՝ տեքստը չի կազմվի [5]:

▪ Փոխարինում (substitution). բառի կամ արտահայտության փոխարինումն է իմաստով մոտ մեկ այլ լեզվական միավորով: Նմանօրինակ փոխարինող միավորներ են one, so, do և այլն: Օրինակ՝ Apparently, incinerators can be considered the best way of getting rid of non-recyclable rubbish so the council intends to install **one** here.

▪ Շաղկապներ և շաղկապական կապակցություններ: Շաղկապները կապակցում են ինչպես նախադասության անդամներն ու բարդ նախադասության միավորները, այնպես էլ նախադասություններն ու պարբերությունները: Օրինակ՝ Large parts of the earth's biodiversity will vanish **because** species will not be able to adapt quickly enough to higher temperatures.

▪ Միջանկյալ միավորներ (transitions, linking markers): Միջանկյալ միավորները միջանկյալ բառերն ու բառակապակցություններն են: Միջանկյալ միավորներից են՝ in addition to, moreover, apart from, however, on the other hand, as a result, thus, hence for this reason և այլն:

2. Վերացարկվածություն: Ակադեմիական գրավոր խոսքի այս առանձնահատկությունը հստակորեն դրսևորվում է բառային մակարդակում: Այստեղ կիրառվում են վերացական նշանակությամբ լեզվական միավորներ: Հայոց լեզվում այն արտահայտվում է -ում, -ույթ, -ություն ածանցներով կառույցների գործածությամբ, անգլերենում՝ -ness, -ance, -ment, -ism, -ity և այլն:

Գիտական տեքստում զեղչումը և մանավանդ հոմանիշների միջոցով բազմազանեցումը՝ կրկնություններից խուսափելու համար, ընդունված չեն. այստեղ կարևորը մտքի ճշգրտության ու հստակության ապահովումն է, թեկուզև լեզվական միավորների հաճախակի կրկնությամբ [5]: Թերևս հոմանիշների կիրառումը արդարացված է միայն այն ժամանակ, երբ գրագողությունից խուսափելու նկատառումներով կատարվում է ելակետային տեքստի շրջասում (paraphrasing):

3. Ճշգրտություն և տերմինային հագեցվածություն: Ակադեմիական գրավոր խոսքի այս հատկությունը ենթադրում է շարադրանքի կառուցում ստույգ դատողություններով և հասկացություններով: Այս դատողությունների և հասկացությունների հիմքում ընկած են տերմիններն ու տերմինային կապակցությունները: Լինելով ակադեմիական գրավոր խոսքի հենքը՝ դրանց գործածությամբ է պայմանավորված շարադրանքի բովանդակությունը: Ճշգրտության պահանջը ենթադրում է բառերի ուղիղ, անվանողական իմաստներով գործածություն, ինչպես նաև դրանց փոխաբերական, բազմիմաստ կիրառությունների, լեզվի պատկերավորման միջոցների, ձայնարկությունների, երկիմաստ արտահայտությունների բացառում:

Գիտական ոճի մյուս հատկանիշները պահանջում են ինչպես բովանդակային, այնպես էլ լեզվական իրողությունների պահպանում: Այսինքն՝ դրանք հավասարապես և՛ բովանդակային, և՛ լեզվական հատկանիշներ են: Պետրոսյանը այս շարքին ավելացնում է սեղմությունը, ճշգրտությունը, կանոնավորությունը, պարզությունը [5]:

4. Օբյեկտիվություն: Ակադեմիական գրավոր խոսքի մեկ այլ կարևոր առանձնահատկություն է տվյալների օբյեկտիվ շարադրանքը՝ առանց հեղինակային վերաբերմունքի դրսևորման: Հեղինակի վերաբերմունքը համոզմունքի կամ կարծիքի տեսքով դրսևորվում է գիտական շարադրանքում՝ «հեղինակային մենք»-ի գործադրմամբ և՛ եզակի, և՛ հոգնակի իմաստով: Անձնական դերան-

վան եզակի թվի առաջին դեմքի փոխարեն հոգնակիի գործածությունը հաճախակի հանդիպող երևույթ է գիտական շարադրանքում և ունի ոճական հատուկ նպատակադրում. նախ և առաջ այն արտահայտում է հեղինակի համեստ վերաբերմունքը, իր «ես»-ը թաքցնելու ձգտումը [6]: Բացի «հեղինակային մենք»-ի գործադրմամբ շարադրանքի օբյեկտիվություն ապահովելուց՝ խոսքաշարի հեղինակը մի շարք բառաքերականական միավորների միջոցով անուղղակիորեն, թաքնված կերպով «ակնարկում» է իր դիրքորոշումների մասին: Այս երևույթը անգլերենում հայտնի է հեջինգ(hedging) եզրույթով, որը հայ լեզվաբանների կողմից դեռևս հավուր պատշաճի թարգմանված չէ: Ինչպես նշում է Ի. Վասիլևան, անգլերենում հեջինգի կիրառության մակարդակը առավել բարձր է, քան մի շարք այլ լեզուների [7]: Անգլերենում հեջինգն արտահայտվում է եղանակավորող բայերով (can, might, ought to), հաստատական (actually, certainly, in fact), երկբայական կամ թեական (perhaps, possibly), հաճախականության (always, often, sometimes, usually) իմաստներ արտահայտող լեզվական միավորներով: Գիտական շարադրանքում լեզվական առումով օբյեկտիվությունն ապահովվում է նաև անդեմ նախադասությունների կիրառմամբ/it is known that..., it can be concluded that...../:

5. Սեղմություն: Սա ոճի այն հատկությունն է, որ պահանջում է տվյալ բովանդակությունն արտահայտել լեզվական համեմատաբար ավելի քիչ միավորներով: Սեղմության առումով գիտական ոճի առանձնահատկություններից է տեղեկույթը նշանների տեսքով՝ գիտությանը բնորոշ ձևայնացված լեզվով ներկայացնելը, որն ընդգրկում է գրաֆիկներ, գծագրեր, նկարներ, դիագրամներ, բանաձևեր և այլն [5]: Անգլերենի ակադեմիական գրավոր խոսքում նկատելի է լեզվական միջոցների տնտեսման միտում: Նախ, սա խնայում է ընթերցողի ժամանակը, երկրորդ՝ այս պահանջը բխում է լեզվի տնտեսման օրենքից: Այսպես՝ անգլերենի գիտական շարադրանքում սեղմություն ապահովող միջոցներից են.

✓ Դերբայական դարձվածով կառույցներ/companies supplying energy, greenhouse gas emission driven by a surge in coal use/: Սրանք հիմնականում բարդ ստորադասական նախադասությունների պարզեցման արդյունք են, որոնք առավել սեղմ ու կոնկրետ են դարձնում ասելիքը:

✓ Ներդրյալ կառույցներ /In four cohorts (Athens, Keio, Mayo, and Florence), investigators stated that...../[8]: Ներդրյալ արտահայտությունների առատ գործածությունը բխում է գիտական շարադրանքի բնույթից: Դրանք ունեն հավելյալ լրացումների արժեք, ուստի գիտական խոսքում դրանց գործածությունը ոչ միայն կարևոր, այլև պարտադիր է [9]: Ներդրյալ արտահայտություններին իրենց գոր-

ծառայած մոտ են բաղիյուսական (copulative) կապակցությունները, քանի որ ունեն մեկնական, հավելական, մակաբերական իմաստներ: Մեկնական իմաստներ են արտահայտում հետևյալ բառային միավորները՝ that is to say, that is why, so, քանի որ բացատրում են նախորդի միտքը: Մակաբերական իմաստ են արտահայտում hence, therefore, thus, for this reason, consequently, as a result, it follows that, to this end բառային միավորները, քանի որ հաջորդ նախադասության միտքը բխեցնում են նախորդից: Հավելական իմաստ են արտահայտում and, but, also, besides, moreover, furthermore, too, in addition, firstly, քանի որ արտահայտում են լրացուցիչ տեղեկություն արտահայտող միտք:

✓ Հապավումներ: Խիստ հանրահայտ հապավումները գործածվում են այնպես, ինչպես գրվում են (the USA, BBC, IBM, AIDS, NATO), քիչ հայտնի կամ երկիմաստ (PC=personal computer, politically correct, police constable; PM=prime minister, post meridian) հապավումներն առաջին անգամ գործածելիս նշվում են ամբողջությամբ, իսկ հապավումը փակագծում, որից հետո միայն՝ հապավման տեսքով:

Ակադեմիական գրավոր խոսքի մեկ այլ առանցքային յուրահատկություններից է *գոյականների առաջ կիրառությունը*: Գոյականների գործածության բացարձակ գերակշռությունը բացատրվում է նրանով, որ գիտության բնագավառում գործ ունենք հիմնականում հասկացությունների հետ, իսկ հասկացությունները դրսևորվում են առավելապես գոյականների միջոցով [9]: Ընդ որում, տարբեր խոսքի մասերի առարկայացումը կամ գոյականացումը (nominalization) ևս ընդունելի է: Օրինակ՝ This paper analyses and solves the problem- This paper gives an analysis of the problem and offers a solution...

6. Կանոնավորություն: Ակադեմիական գրավոր խոսքում պարտադիր պայման է գրական լեզվի օրինաչափությունների, քերականական կանոնների պահպանումը, ինչպես նաև լեզվական մերժելի ձևերի, այն է՝ ժարգոնի, արգոյի, գոեհկաբանության, մակաբույծ բառերի, ավելադրությունների, կրճատումների բացառում: Օրինակ՝ wanna, gonna, outta, go bananas/go insane/, yonder, bamboozle /deceive/, ruckus /commotion/, don't, can't, won't, info, ad.

7. Պարզություն: Ոճի այս հատկանիշը պահանջում է գիտական շարադրանքի բովանդակությունն արտահայտել պարզ, հասկանալի լեզվական կառույցներով: Վերջին շրջանում անգլերեն ակադեմիական գրավոր խոսքում առավել նկատելի է պարզ նախադասությունների կիրառումը: Ըստ Օ.Գ. Լեբեդևայի՝ անգլերեն գիտական շարադրանքում նախադասությունների ընդհանուր թվի 50%-ից ավելին պարզ նախադասություններ են [10]: Մինչդեռ հայերենում և

ռուսերենում նախադասությունները բարդ են՝ շաղկապների հաճախակի գործածությամբ, որոնք արտահայտում են հատկապես պատճառահետևանքային կապեր:

**Եզրակացություն.** Ամփոփելով անգլերենի ակադեմիական գրավոր խոսքի բովանդակային առանձնահատկությունների մասին ասվածը՝ կարելի է ընդհանրացնել հետևյալը. անհրաժեշտ է, որ գիտական գործունեությամբ զբաղվող ցանկացած անհատ ոչ միայն համակարգված կերպով հաղորդի գիտական տեղեկույթը, այլ նաև տիրապետի այդ տեղեկույթի հաղորդման լեզվին, որը պետք է աղերս ունենա գիտականության նորմերի հետ: Ակադեմիական գրավոր խոսքին, այդ թվում՝ նաև անգլերենի ակադեմիական գրագրությանը, բովանդակային առումով հատուկ են տեղեկույթի հաղորդման վերացարկվածությունը, կապակցվածությունը, ավարտվածությունը, իսկ լեզվաճանաչական հատկանիշների մի մասը՝ կանոնավորությունը, պարզությունը, սեղմությունը, պայմանավորում են շարադրանքի նաև բովանդակային հատկանիշները: Դրանք փոխապայմանավորված են և սերտորեն առնչվում են մեկը մյուսին: Եվ քանի որ գիտական տեքստին բնորոշ է տիպարային կառուցվածքը, ուստի ակադեմիական գրավոր խոսքի հիշատակված առանձնահատկություններից մեկի բացակայության դեպքում չի կայանա գիտական գրավոր հաղարդակցությունը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ջահուկյան Գ.Բ., Խլղաթյան Ֆ.Հ.** Հայոց լեզվի ոճաբանություն/Ուսումնական ձեռնարկ ուսուցիչների և ավարտական դասարանների աշակերտների համար/, Եր., Զանգակ, 2007, էջ 140:
2. **Буре Н.А., Быстрых М.В., Вишнякова С.А. и др.** Основы научной речи: Учеб. пособие для студ. нефилол. высш. учеб. заведений. -СПб.: Филологический факультет СПбГУ; М.: Издательский центр «Академия», 2003.- 272 с.
3. **Никольшина Н. Л.** Аспекты обучения иноязычной научной письменной речи в высшей школе : Монография.-Тамбов: Изд-во ФГБОУ ВПО «ТГТУ», 2014.- 160 с.
4. **Bailey S.** Academic writing: A handbook for international students.- London and New York, Routledge.- 314p.
5. **Պետրոսյան Հ.Ց.** Գիտական գրավոր խոսք, Եր., Ճարտարագետ, 2014, էջ 288:
6. **Եզեկյան Լ. Կ.** Ոճագիտության ուղեցույց, Եր., Զանգակ, 2007, էջ 120:
7. **Vassileva I.** Commitment and detachment in English and Bulgarian academic writing //English for Specific Purposes.- 2001.- № 20,- P. 83-102.
8. **Biber D., Gray B.** Grammatical change in the noun phrase: the influence of written language use //English Language and Linguistics.- 2011.- № 15(2),- P.223-250.

